
Արդարութիւնն է արդեօք 30.000 ռ. ծախսողի անունն անհետք չնշել և 3000 ռ. ծախսողի անունը նրա տեղը զննել և յաւելուած՝ խնամակալ ևս անուանել:

Այժմ Միրզոյեանի այրին բողոքում է. ծխականների համար խնդիր է, հասարակութեան դատաստանի առաջ հարց է թէ իսկապէս դպրոցը Միրզոյեան թէ Գրիգորեան պէտք է անուանել. թէ ճարտարապետի հաշիւները զննել պէտք է, թէ ծածկել:

Ի դէպ. Оты смѣшного до великаго одиного шага. Այրի Մարիամ Պապովեան, յունվարի 27-ին ներկայանալով Կաթողիկոսին, մի խնդիր է մատուցել, որով յայտնել է, թէ իր հանգուցեալ ամուսնու՝ Փրիգորի յիշատակի համար նուիրում է 10.000 ռ. Յիսկովալ զիւղի հայոց դպրոցին, որից 4000 ռ. նոր շէնք կառուցանելու համար, 6000 ռուբլին մի անշարժ կալուածք առնելու դպրոցի պահպանութեան համար այն պայմանով, որ զըպրոցը կոչվի Պապովեան, և ուրիշ ոչինչ չէ կամենում: Այրին ինքը ցիւնիվացի է, չը գիտէ հայերէն խօսել, կարելի է ասել թէ իր ունեցած կաթողութեան 1/3 մասը նուիրում է դպրոցին, այն էլ իր կենդանութեան ժամանակ: Սա բացատրիկ երևոյթ է—արժանի ամեն գովասանքի:

Հրահով էլ ցոյց տալ, չօշափելի կացուցանել ուսման կարևորութիւնը, կրթութեան մեծ դերը: Անուշադրութեան տալով գրամայի հոդեւանական աշխի ընկնող պակասութիւնները, տիպերի անորոշութիւնը,—պէտք է խոստովանել, որ զբոլածքը հետաքրքիր կտորներից գուրկ չէ: Ներքին—ընտանեկան կեանքի ալլանդակ կողմերից մի քանիսը, ինչպէս օրինակ, կանանց յարաբերութիւնը զէպի իրանց ամուսինները, անահաւատութիւնը, մոլորների հմայութիւնն ու շահասիրութիւնը հետաքրքիր կտորներ են, որ տեղ են բռնել «Նաթանիէլի» մէջ:

Կանանց դերերը կատարում էին աղամարդիկ: Թատրոնը կատարելապէս լի էր: Հեղինակին տունն երկու ընծայ, մէկը հասարակութեան կողմից, միւսը իր ընկերներից՝ մի ոգետիչ ատենաբանութեամբ, այն էլ ներկայացման միջոցին...

Ն. Գ.

ՆԱՄԱԿ ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, յունվարի 14-ին
1884 թ.ին, Բաֆֆիի յօրեկանի առիթով, Վա. նի հայ երիտասարդութիւնը պատրաստել էր մի արծաթեայ թանաքաման ու մի արծաթեայ գրէկ, բայց զանազան հանգամանքների շնորհիւ, մինչև հիմա յիշեալ նուէրը մնում էր Վանում: Սալմաստի թեմական տեսուչ Ա. Աւետիսեանի հոգաբարձութեամբ այդ իրերը ուղարկված էին Վանից ուղարկել է Լյմիածին և այս օրերս ստացանք խորէն խրիմեանի ձեռքով:

Յիշեալ կաղամարը նուրը, գեղեցիկ ձաշակով է շինված. շրջաններից քարը են ընկել երկու շրջաթայ... մի երեսի վրա փորագրած է ծաղկազարդ տառերով՝ «Վանի հայ երիտասարդներին Բաֆֆիին, յօրեկանի առթիւ». միւս երեսին փորագրած է՝ «1884 ինտրվարի 16-ին»:

«Կայծեր» հեղինակը բաղդ չունեցաւ իր կենդանութեան ժամանակ՝ Ասլանի, Կարօյի, Սաքօյի աշխարհից այդ համակրանքի արտայայտութեան նշանը տեսնել: Խիստ համակրական է և ուրախալի, երբ մի բուռ երիտասարդութիւն, ըմբռնելով իր ազգի հեղինակի արծաթած մըտքերը, գնահատելով նրա գործունէութիւնը՝ կամենում է վարձատրել նրան իր համակրելի լուսամայով... Վանի հայ երիտասարդութիւնը, ժամանակին, հեղինակի կենդանութեան ժամանակ, արտայայտել է իր համակրութիւնը, այնտեղ կատարելով նրա յօրեկանը (մանրամասնութիւնը տես «Մշակի» 1883 թ.ին համարներում):

Ստանալով այդ թանգազին նուէրը, պարտաւոր եմ համարում ինձ՝ Բաֆֆիի յօրեկանի առիթով ստացված նուէրների մէջ ամենապատուաւոր տեղում դետեղել նրան և յայտնում եմ իմ խորին շնորհակալութիւնը այն յարգելի պարոններին, որոնք աշխատեցին աղագույն այդ փոքրիկ գրքիկը կարգաւ բանտարկութիւնից... և հասցնել ինձ:

Այրի Աննա Բաֆֆի

ՆՆՈՒԹԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պօլսկի մեզ գրում են. Լիվիլեան պատերազմը զիմեց դեպքաններուն խնդրելով, որ եւրօպական պետութիւններ երաշխաւորութիւն մը տան, թէ Հայաստանում բարենորոգումներ պիտի մտցվեն, և հայերը չեն ենթարկվի նոր հաւածանքների: Գնապանների տուած պատասխանը առ այժմ անյայտ է:

Մեզ գրում են մի նամակով Վիեննայից, որ արտասահմանի հայ-կաթողիկոսների մէջ մեծ զբոգութիւն է նկատվում զէպի Աղարեան պատերազմի բռնած անհամակրելի ընթացքը:

Գրողների համար նշանակած ֆոնդին արդէն դիմումներ անողներ կան: Ի միջի այլոց օգնութիւն է խնդրում Վարչախոյնը նորեքս վախճանված կրթասովակու ընտանիքը, այդ առիթով «Недѣля» շաբաթաթերթը հարց է դնում.—արդեօք կրթասովակին առաւելապէս գրող էր, թէ օժիցեր:

Երկուշաբթի օր, փետրվարի 6-ին, Բանկի թատրոնում տրվելու է հայերէն մի ներկայացում: Պէտք է խաղան «Ուրիշ Արտաշատ»: Բացի դերասան Պետրոսեանից, ներկայացմանը մասնակցելու են մի խումբ նոր սիրողներ:

Մեր խմբագրութեան մէջ ստացվեց Պետերբուրգից, Է. Մարկուսի հիմնարկութեան հրատարակած Թագաւոր Կայսր Նիկոլայ Ալեքսանդրովիչի իշխանկար մեծադիր պատկերի մի օրինակ: Պատկերը պատրաստված է Կայսերական գեղարուեստական ճեմարանի պատկերաբան գեղարուեստադէտ Գալկինի ընագրից և երկու տեսակ է, առաջինը բնական մեծութեամբ՝ 18 վերջով երկարութեամբ, 14 վերջով լայնութեամբ, արժէ 3 ռ. երկրորդը, մինչև զօտին՝ նոյնպէս բնական մեծութեամբ, բայց աւելի մեծ չափով, արժէ 5 ռուբլի:

Մօզզօլից, տիկին Յուստեանէ Գանջումեանցը նուիրեց «Մշակի» 1895 թ.ին մի օրինակ այդ քաղաքի հայոց դպրոցին:

Բոստօլից, Ն. Մէլիք-Յակոբեանց ուղարկել է մեզ 10 ռուբլի, որպէս զի «Մշակի» այս տարվայ մի օրինակ ուղարկենք Սալմաստի Փայաջուկ գիւղի հայոց դպրոցին:

ԲԱԹՈՒՄԻՅ մեզ գրում են. «Տներն և այն էլ բազմաքանակ շինութիւնների կրակ ընկնել կարծէք մօղա է դարձել մեր քաղաքում: Այս մի տարվայ ընթացքում բաւական թիւով հրդեհներ են տեղի ունեցել գործարաններում, խանութներում, հիւրանոցներում և քաղմարեան շինութիւններում: Որքան և չօղենայինք մարդկանց «մեղքը» մեզ վրա առնել, այնու ամենայնիւ համարձակ կարելի է ասել, որ դրանցից մեծ մասը դիտմամբ է լինում սարքած՝ ապահովագրութեան տաճանակ հազարներ ձեռք բերելու համար. սակայն օրքան ցաւալի է, որ մի քանի արդէն հարուստ անհատների ազահութեան պատճառով, հարկաւոր առանց այն էլ աղքատ ընտանիքներ ստատարելի թըշուառութեան են մատնվում: Մի անգորին հրդեհ էլ տեղի ունեցաւ երկ գիւղեր, ամսիս 29-ին. կրակը ոչնչացրեց «Խալիս» հիւրանոցը, որի ներքին յարկում, ի միջի այլոց, գտնվում էր և Գուրիյովի տպարանը: Տիֆլիս Գուրիյով վերջերս սկսել էր բաւական կարգ ու կանոնի վերածել տպարանը. նա բերել էր առկա մի քանի լեզուների տառեր, ի միջի այլոց և հայերէն: Տիֆլիս Գուրիյով էր հրատարակում հեռագրական գործակալութեան հեռագրիչները և թէ յայտարարութիւնների պարունակով «Բաթում» օրաթերթը: Յոյս կայ, որ տիֆլիս Գուրիյով նորից կը սկսի ձեռնարկել իր գործին»:

ԱԼԷԲԱՍԿՈՒՊՈԼԻՅ մեզ գրում են յունվարի 24-ից. «Փոքր ի շատէ քաղաքակիրթ երկրներում հասարակաց գերեզմանոցները պահվում են խնամքով և մաքուր. բայց մեզ մօտ, ընդհանրապէս, ոչ միայն հակադրութիւն չը կայ մաքուր պահելու, այլ և հասարակաց գերեզմանոցը քանդում են և շատ անգամ ամենամանկայն կերպով: Քաղաքիս արեւմտեան կողմում կայ մի բլուր, որտեղ թաղված են 1840 թ.ից մինչև 1877 թ. ննջեցեալները. այդ գերեզմանոցը պատկանում է մեծ մասը հայոց, փոքր մասը հայ-կաթողիկ հասարակութեանը: Յունաց և ռուսաց գերեզմանոցը պատկանում է և շատ օրինակելի մաքրութեամբ է պահվում. տնկված են բազմաթիւ ծառեր, կայ ջուր և զանազան յարմարութիւններ. բայց հայոց գերեզմանոցը, չունենալով պարիսպ, անպաշտպան էր և տեղը տներ շինում, և այդպէս 28 հազար սաժեն տարածութիւն ունեցող տեղը քանդուկ, այժմ 10 հազար սաժեն է մնացել: Այդ գերեզմանոցում կան հազարաւոր շնչեղեղների շինութիւններ, կան ծոխ քարեր, մահաձաններ, բայց անտէրութեան շնորհիւ օրից օր քանդվում, յափշտակվում են, նոյն իսկ հայերի ձեռքով:

ՇՈՒԴՈՒՅ մեզ գրում են. «Այվազեան եպիսկոպոսը կաթողիկոսական կոնդակով կանչված է Թիֆլիս Վրինկ ընդ նորին վիճակաւութեան ի ժամ ուղեորութեան», և նոյն կոնդակի զօրութեամբ արաքնորդական գործերը և հաշիւները պէտք է յանձնէ: Կոնստանտնուպոլիս և զնայ. իսկ թեմի կառավարութիւնը «մինչև ցնոր կարգադրութիւն» յանձնված է Գանձակի յաջորդ Սաթուհեան վարդապետին»:

ԵՐԵՒԱՆԻՅ մեզ գրում են. «Երիտասարդ Բարխուդարեանը, ամսիս 26-ին, ժողովարանի դահլիճում մի կօնցերտ տուեց, որի արդիւնքով ուղում

է Եւրօպա գնալ ձայնը կատարելագործելու: Մենք պարտաւոր ենք ներողամիտ լինել զէպի այդ երիտասարդը, որպէս առաջին անգամ բեմ դուրս եկողի, բայց նոյնը չենք կարող ասել սիրողների վերաբերմամբ, որոնք այդ կօնցերտին ներկայացրած «Պառաներուն խրատ» վոյզովում անհոգ էին վերաբերվել զէպի իրանց գործը»:

ՆՈՒՍԻՅ, Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի վարչութիւնը խնդրում է մեզ տպել հետեւեալը. «Թող տուէք հրապարակով մեր խորին շնորհակալութիւնը յայտնել նախ՝ այն պարտնեղին, տիկիններին և օրիորդներին, որոնք սիրով և ուրախութեամբ մասնակցեցին յունվարի 12-ի ներկայացմանը, յօգուտ ընկերութեան տեղական ճիւղի և երկրորդ՝ Նուխու հայ հասարակութեան, որը, գնահատելով սիրողների ներդրութիւնը և ներկայացման նպատակը, ներկայ էր ներկայացման: Բացի այս, տեղական վարչութիւնը յայտնում է ի զիտութիւն ամենքի, որ ներկայացուցից դոպայել է մուտք 194 ռուբլի 40 կօպէկ, իսկ ծախք եղել է 48 ռ. 15 կ.: Զուտ արդիւնք մնացել է 146 ռ. 25 կօպէկ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՐԻՍՏՈՆԵԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Բէյրութից հաղորդում են. «Königsb. Hart. Zeit.» որ քրիստոնէաների դրութիւնը Սիրիայում շատ անապահով է: Ջեզաբէի շրջանում մի քանի ժամանակից արդէն դրուղները ամենամասնական կերպով կոտորւում են և սպանութիւններ են կատարում: Բէյրութում և Գամակոսում քրիստոնէաները չեն վստահանում դուրս գալ տանից երեկոյան: Գրողների կատարած բնութագրութիւնները անպատիժ են մնում և այդ պատճառով նրանց յանդիմութիւնը օրից օր աճում է: Գամակոսի մահմետական թաղը զէպերի մեծ պաշարներ են ուղարկված. քրիստոնէաները վախենում են, որ չը լինի թէ կրկնվի 1860 թ.ի կոտորածը:

ՆԱՄԱԿ ԹԻՐԻԳԻՍԵՅ

Տրապիզոն, յունվարի 23-ին
Երէկ երեկոյ, ըստ թրքականին ժամը 1 1/2-ին, 15—16 տարեկան Գառնիկ անուն մի հայ պատանի, քաղաքիս հրապարակը անցած պահուս երկու թիւքեր՝ մին հեռագրատան պաշտօնեայ և միւսը կառավարական գրագիր, կը յարձակուին անոր վրա և կը բռնադատեն տղան իրենց հետէն երթալ... Տղան կընդդիմանայ և այնչափ կը չարարուի ինքզինքը աղագետու համար, որ երբ կը յաջողի խոյս տալով չնչսպառա մտնել ժողովայ սրճարանը, իր հազուատները ծուկ պատառ եղած էին և բաձկոնին կէսը միայն մնացած էր վրան:

Մի և նոյն ատեն բարեկիրթ պաշտօնեայներն ալ կը մօտենան սրճարանին և պատուհանէն ներս կը նային:

Տղան անոցը վրա ցոյց կուտայ սարսափով և եղելութիւնը կը պատմէ: Սրճարանին մէկ ծառան, որ տղան ալ աղգակնան է, հանդարտութիւնը չը վրդովելու համար, տղան կը համոզէ թէ անշուշտ սխալած է, այդ մարդիկը ըլլալու չեն և թէ այդ պաշտօնեայներն այնպէս մարդիկ չեն, և այն և այլն. հիմա ալ գնա, տեսնենք բան մը կընենք. բայց տղան հաղիւ 5—10 քայլ առած էր սրճարանէն դուրս, ահա երկու անբարոյական դադաններ կը բռնեն զանի և ոչ միայն ապապկելով չեն թողուր, որ իր ճանապարհը շարունակէ, այլ կը սկսեն իրենց յանդուգն դիտաւորութիւնը ծայրայեղութեան տանիլ:

Վերջապէս Գառնիկ ըբօլիս՝ պօռալով ձեռքերէն կը փախչի. այս անգամ բոլիս մը և մի քանի դիւնոր վրա կը հասնին ու պաշտօնեայներ կը ձեռքապահեն:

Բայց կը յուսացուի, որ այսօր իսկ բանտէն աղատ կարձակուին, (եթէ այս վայրկեան չեն արձակուած), նա մասնաւոր, որ պաշտօնեայ են:

Տ—Ի

ԻՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Նորբոս Բարում տեղի ունեցած մի հարսանիքի ժամանակ—գրում է «Kacni» լրագրիւր,—

